Ազգ Azg
25 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2013 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 226(5308)
ISSN: 1829-1651

# Ո՞վ է լրագրողը



**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**«Ես կնախընտրեի քաղաքական պաստառների փոխարեն տեսնել ավելի որակյալ լրագրություն, լրագրողական հետաքննություններ նույն գազային համաձայնագրերի մասին», առաջիններից մեկը Ազգային ժողովում լրագրողների քաղաքացիական ակտիվության արձագանքեց Media.am-ի լրագրող Գեղամ Վարդանյանը: Հրապարակմանն արագ արձագանքեցին այլ լրագրողներ եւ փորձագետներ ու բազմաթիվ տեսակետներ հայտնվեցին: Լրագրողների ու փորձագետների մի մասը պնդում էր, որ այն պահից, երբ լրագրողը քաղաքականությամբ է զբաղվում, այլեւս լրագրող չէ, մյուս մասը գտնում էր, որ լրագրողը եւս քաղաքացի է, ու երբ երկրի քաղաքացիների ճակատագիրն է որոշվում, նա անտարբեր լինել չի կարող:**

**Ուրախալի է փաստը, որ սոցիալական ցանցերում եւ լրատվամիջոցներով երեկ բավական քննարկվեց լրագրողների պահվածքն Ազգային ժողովում, գազային համաձայնագրի քվեարկության ժամանակ: Խոսակցությունը բազմաշերտ ստացվեց, ինչը եւ ուրախալի է, քանի որ անկախ լրագրողական էթիկայի վարքականոններից եւ օրենքներից՝ երեւի պետք է բախվել կյանքի համանման իրավիճակների, հասկանալու համար, թե ո՞ր բովանդակությունն է քեզ մոտ ավելի ընդգծված՝ լրագրողական-մասնագիտական, թե՞ քաղաքացիական: Եվ միգուցե այդպիսի իրավիճակը ճակատագրական դառնա լրագրողի համար, քանի որ կմղի որոշում կայացնելու՝ լրագրությունն իր համար նեղ է հարցեր լուծելու համար, ինքը պետք է քաղականությամբ զբաղվի, իսկ երկուսը համատեղելը ճիշտ չէ:**

*Տես էջ 4*

# Հաստատեցին «քարտեզը» մի ճանապարհի, որով Հայաստանը կընթանա դեպի անորոշություն



**ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը երեկ՝ դեկտեմբերի 24-ին մասնակցեց Մոսկվայում պետությունների ղեկավարների մակարդակով կայացած Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի ընդլայնված կազմով նիստին, որից վերադառնում է Հայաստան՝ Մաքսային միությանը Հայաստանի անդամակցության հաստատված «ճանապարհային քարտեզով»:

Իսկ որ այդ քարտեզ ասվածն էլ հաստատվել է, նիստից հետո մամուլի ասուլիսում, ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալության, հայտարարել է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը:

Մինչեւ հաստատվելն էլ, դեռեւս նիստի ընթացքում, Պուտինը նշել էր, թե հիշյալ քարտեզը հաստատվելու էր երեկ, ինչը եւ տեղի ունեցավ: Մաքսային միության եռյակից Ղազախստանը, սակայն, հատուկ կարծիքով է պատրաստ ստորագրել Հայաստանի «ճանապարհային քարտեզը»՝ նկատի ունենալով ղարաբաղյան հարցը, իսկ ավելի կոնկրետ՝ թե սահմանային ինչ վիճակ է լինելու Արցախի հետ: Այս մասին Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը հայտարարել է հենց նիստի ընթացքում: Այս հարցը, ըստ Ղազախստանի նախագահի, կփորձեն լուծել փորձագետները:

Ակնհայտ է, որ այս հարցը փորձագետների մակարդակում չէ, որ լուծվելու է, եթե, ընդհանրապես, լուծվելու է, քանի որ Արցախի հետ հարաբերությունների ու սահմանների անցկացման հարցը առկա է Հայաստանի որեւէ ինտեգրման ձեւաչափում ներգրավման պարագայում: Թե ինչ են այս հարցում որոշել Մոսկվայում ու ինչին է համաձայնել Հայաստանը՝ վաղ թե ուշ կիմացվի: Ամեն դեպքում, «զգայուն հարցեր» ունի նաեւ հենց ինքը՝ Ղազախստանը, Ռուսաստանի հետ, մասնավորապես՝ էներգետիկայի ոլորտում

*Տես էջ 3*

# Նվիրատվություն Սիրիայի հայկական դպրոցներին

**Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի ու Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի ուշադրության կենտրոնում շարունակում են մնալ Սիրիայում տիրող իրավիճակը եւ սիրիահայության ծանր կացությունը: Հայ առաքելական եկեղեցու աշխարհասփյուռ թեմերը Մայր աթոռի միջոցով տարբերաբար աջակցություն են ցուցաբերում սիրիահայությանը՝ հաղթահարելու դժվարին պայմանները:**

**Սուրբ Ծննդյան տոների առիթով Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը 100.000 ԱՄՆ դոլար գումար է փոխանցել Դամասկոսի հայոց թեմին՝ Սիրիայի հայկական դպրոցների կարիքների համար:**

# Հրանտ Դինքի գործով անցնող կասկածյալը սպառնացել է նոր անուններ բացահայտել

**Ստամբուլի «Ակօս» թերթի նախկին խմբագրապետ Հրանտ Դինքի սպանության գործով կասկածյալ Էրհան Թունջելը կալանավայրից նամակ է ուղարկել ոստիկանության գլխավոր տնօրենության հետախուզական վարչության պետ Էնգին Դինչին՝ սպառնալով, որ եթե դատական հաջորդ նիստի ժամանակ իրեն չազատեն եւ բարոյական վնասի փոխհատուցում չտան, ապա հանդես կգա սպանությանը մասնակից նոր անունների բացահայտմամբ: Այս մասին, ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը, հայտնում է թուրքական «Թարաֆ» թերթը:**

**Ավելի վաղ տված ցուցմունքներում Էրհան Թունջելը հայտարարել էր, որ Հրանտ Դինքի սպանության պատասխանատուն Տրապիզոնի քաղաքային ոստիկանության պետ Ռամազան Աքյուրեքի գլխավորությամբ գործող հանցավոր խումբն է:**

**Նամակում Թունջելը Դինչին սպառնացել է, թե ինքը կբացահայտի, որ Դինքի սպանությունը կատարել է «Էրգենեքոն» ազգայնական խմբավորումից «բարձր կանգնած կառույցը»: «Գոնե մեկ անգամ արա մեծ եղբոր անելիքը, եւ ես, ինչպես միշտ, կանեմ կրտսեր եղբոր իմ անելիքը: Հակառակ դեպքում՝ ցուցմունք կտամ, որ Դինքի սպանությունը ծրագրել է «Էրգենեքոն»-ից բարձր կանգնած խմբավորումը»,- նամակում նշել է Թունջելը:**

**Թերթը մեկնաբանել է, որ Դինքի գործով որպես հրահրիչ անցնող Էրհան Թունջելը նամակում բացահայտորեն սպառնում է ոստիկանության պաշտոնյային եւ նշում, որ նա է եղել իրեն օգտագործողներից մեկը:**

**Ստամբուլի «Ակօս» թերթի հայազգի խմբագրապետ Հրանտ Դինքը սպանվել է 2007 թ. հունվարի 19-ին խմբագրատան առջեւ: Նրան սպանելու գլխավոր պատճառը Հայոց ցեղասպանության մասին բարձրաձայնելն էր:**

# ԱՄՀ. «Հայաստանի համար պահպանվում են էական մարտահրավերները»

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) պատվիրակությունը, Մարկ Հորթոնի գլխավորությամբ, դեկտեմբերի 9-18-ն այցելել է Երեւան՝ 38-ամսյա երկարաձգվող ֆինանսավորման հնարավոր նոր ծրագրի քննարկումները շարունակելու նպատակով: Առաքելությունը հանդիպել է վարչապետ Տիգրան Սարգսյանի, ֆինանսների նախարար Դավիթ Սարգսյանի, Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանի, էկոնոմիկայի նախարար Վահրամ Ավանեսյանի, էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանի եւ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Վաչե Գաբրիելյանի, ինչպես նաեւ կառավարության այլ բարձրաստիճան պաշտոնյաների, միջազգային հանրության եւ բանկային ու գործարար ոլորտների ներկայացուցիչների հետ:

Այցի ավարտին Մարկ Հորթոնն արել է հետեւյալ հայտարարությունը. «Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել համաշխարհային ֆինանսական ճգնաժամից վերականգնվելու եւ իր տնտեսությունը վերակողմնորոշելու ուղղությամբ, սակայն էական մարտահրավերները պահպանվում են: Դրանց թվում են արձագանքը 2013 թ. աճի տեմպի դանդաղմանը, վերջին տարիների մասնավոր եւ օտարերկյա ուղղակի ցածր ներդրումներին եւ համեմատաբար բարձր աղքատությանն ու գործազրկությանը: 2009 թ. սկսած, այդ թվում՝ 2013 թ., ընթացիկ հաշվի պակասուրդը զգալի կրճատվել է, սակայն համեմատաբար բարձր է պահպանվում: Թեեւ կարեւոր առաջընթաց է գրանցվել կառուցվածքային բարեփոխումների ուղղությամբ, այդ թվում՝ ֆինանսական հատվածում, կենսաթոշակային, սոցիալական նպաստների եւ քաղաքացիական ավիացիայի ոլորտներում, անհրաժեշտ են գործարար միջավայրի հետագա բարելավումներ՝ մրցակցությունը, մրցունակությունը եւ կապակցվածությունն ամրապնդելու համար: Նշված գործողությունները կօգնեն մասնավոր գործունեությունն ուղղել դեպի ներդրումներ եւ խթանել արտահանումը: Մյուս ոլորտներում, ինչպես օրինակ էներգետիկայի ոլորտում, անհրաժեշտ են ռիսկերի ավելի լավ գնահատմանը եւ զսպմանն ուղղված գործողություններ:

Նոր ծրագրի նպատակը կլինի կայունության ամրապնդումն ու հետագա բարեփոխումների իրականացումը, որոնք կապահովեն Հայաստանի անցումը դեպի դինամիկ զարգացող շուկայական տնտեսություն: 2014 թ. բյուջեի պակասուրդը սպասվում է, որ կբարձրանա՝ հաշվի առնելով կապիտալ ծախսերի ավելացումն ու աշխատավարձերի ու կենսաթոշակների բարձրացումը: 2015 թ. սկսած ծրագրով կնպատակադրվի կապիտալ ծախսերի շարունակական աճ՝ բյուջեի պակասուրդի աստիճանական կրճատման հետ մեկտեղ: Ռիսկերի ավելի լավ վերլուծությունը, կարգապահության բարձրացումը, խաղի ավելի հավասար կանոնները եւ հարկային ճեղքվածքների վերացումը կապահովեն ավելի բարձր եկամուտներ՝ սոցիալական եւ ներդրումային կարիքների եւ պակասուրդի կրճատման համար: Դա պետական պարտքը կփոխադրի նվազման ուղի: Դրամավարկային եւ արտարժութային քաղաքականությունները կշարունակեն թիրախավորել ցածր գնաճն ու նպաստել արտաքին ճշգրտման ապահովմանը: Հայաստանի կենտրոնական բանկն իր բուֆերները կպահպանի առողջ մակարդակում եւ կամրապնդի ցնցումներին դիմագրավելու իր կարողությունը: Ծրագիրը կաջակցի նաեւ 2 ֆինանսական հատվածի խորացմանն ու գործարար միջավայրի հետագա բարելավմանն ուղղված միջոցառումների, այդ թվում՝ ամրապնդելով նշված ոլորտներում Հայաստանի իրավական դաշտը: Ծրագիրը կնպատակադրի ներդրումների եւ արտահանման աճի բարձրացումը եւ իր հերթին կօգնի աղքատության եւ գործազրկության կրճատմանը»:

# «Ներդրումային պարտավորությունները չկատարող սեփականատերերը կտուգանվեն»

## Պետական գույքի կառավարման վարչության պետ Արման Սահակյանը ամփոփեց 2013 թվականը

Հայաստանի Հանրապետությունում օտարվող պետական գույքը գնահատվում եւ վաճառվում է միայն շուկայական արժեքներով: Այս մասին երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ ասաց պետական գույքի կառավարման վարչության պետ **Արման Սահակյանը**՝ պատասխանելով լրագրողների հարցերից մեկին: Անդրադառնալով կրկեսի եւ «Դվին» հյուրանոցի սեփականատերերի կողմից ներդրումային պարտավորությունների կատարման մասին հարցերին՝ վարչության պետը տեղեկացրեց, որ «Դվին» հյուրանոցի սեփականատերը պարտավորվել է մինչեւ 2016-ն ավարտել հյուրանոցի վերակառուցումը, այդ նպատակի համար ներդնելով մոտ 16 մլն դոլար: Ըստ տարիների՝ 2013-ին նախատեսվում է ներդնել 850 հազար դոլար, 2014-ին՝ 3,9 մլն դոլար եւ 2015-ին՝ 8,7 մլն դոլար: Այս անգամ եթե ներդրողը չկատարի իր պարտավորությունները, պարտավոր կլինի վճարել տույժեր չներդրված գումարի 6 տոկոսի չափով:

Ըստ Արման Սահակյանի՝ կրկեսի ներդրումային ծրագիրը սկզբում եղել էր 250 մլն դրամ, բայց հետագայում, երբ որոշվեց քանդել հին շենքը եւ կառուցել նորը, սեփականատերը պարտավորվեց կատարել 650 մլն դրամի ներդրումային ծրագիր: Պետական գույքի կառավարման վարչության պետը համոզմունք հայտնեց, որ սեփականատերը կկատարի այդ ներդրումը, եւ 2015-ին մենք կունենանք նոր, միջազգային չափանիշներին համապատասխանող կրկես:

Օտարված այլ օբյեկտների՝ Սասունցի Դավթի արձանի հարեւանությամբ կիսակառույց շենքի, «Սեւան» հյուրանոցի եւ երիտասարդական պալատի փոխարեն նախատեսվող կառույցների ճակատագրի վերաբերյալ Արման Սահակյանն ասաց, որ դրանք իր ղեկավարած վարչության ենթակայության տակ չեն:

Այդուհանդերձ, երեկվա մամուլի ասուլիսի նպատակը 2013-ի ամփոփումն էր: Արման Սահակյանն անցնող տարին պետական գույքի կառավարման ոլորտում համարեց արդյունավետ աշխատանքի տարի: Նրա տեղեկացմամբ՝ պետական գույքի մասնավորեցումից 2013-ին գոյացել է ավելի քան 447 մլն դրամ՝ նախորդ տարվա ցուցանիշը գերազանցելով 26 տոկոսով, պետական գույքի օտարումից 2013-ին գոյացել է 1 մլրդ 260 մլն դրամից ավելի՝ անցյալ տարվա ցուցանիշը գերազանցելով 56 տոկոսով:

Պետգույքի կառավարման վարչության պետը նաեւ թվարկեց եւ մանրամասնեց այն իրավական ակտերը, որոնք, նրա խոսքերով, թույլ են տալիս արմատական բարեփոխումներ իրականացնել պետական սեփականություն համարվող անշարժ գույքի կառավարման ոլորտում, համալիր լուծում տալ տարիներով կուտակված շատ խնդիրների, ինչպես նաեւ հանրօգուտ ներդրումային ծրագրերը խթանել:

Արման Սահակյանը հայտնեց նաեւ, որ 2013-ին կառավարության որոշումներով Ադրբեջանից բռնագաղթած 54 ընտանիքների սեփականաշնորհել են իրենց զբաղեցրած 61 սենյակները, եւս 123 տեղաբնակ ընտանիքների համար էլ զբաղեցրած 140 սենյակների նվիրատվության որոշումներ են կայացվել: Նմանատիպ մի քանի նախագծեր էլ գտնվում են կառավարությունում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Հայաստանի ազգային արխիվը թվայնացման ոլորտում մեծ հաջողությունների է հասել

Հայաստանի Ազգային արխիվի համար 2013 թվականը մեծ ձեռքբերումների եւ նոր տեխնոլոգիաների կիրառման տարի էր: Այս մասին լրագրողների հետ հանդիպմանը, ամփոփելով տարին, ասաց Ազգային արխիվի տնօրեն **Ամատունի Վիրաբյանը**: Նրա խոսքով՝ արխիվը 2013 թվականին համալրվել է 35 հազար արխիվային փաստաթղթերով:

«Տարին արխիվի համար բավական հաջող էր: Մենք կարողացել ենք թվայնացնել շուրջ 119 հազար թերթ արխիվային փաստաթուղթ»,- «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ ասաց նա:

Վիրաբյանը նշեց, որ բավական մեծացել է քաղաքացիների հետաքրքրությունն արխիվի նկատմամբ: «Այս տարի 29 հազար հարցում ենք ստացել՝ նախորդ տարվա 24 հազարի փոխարեն»,- ասաց Ազգային արխիվի տնօրենը՝ հավելելով, որ արխիվի փաստաթղթերի թիվը կազմում է 4 մլն 124 հազար 796 միավոր:

Վիրաբյանի խոսքով՝ այս տարի արխիվում 40-ով ավելացել է նաեւ հետազոտողների թիվը՝ 530-ից դառնալով 570:

Հայաստանի ազգային արխիվը հիմնադրվել է 1923 թվականին: Ներկայում ՀԱԱ ենթակայությամբ գործում են 11 մարզային մասնաճյուղեր եւ 29 տարածքային ներկայացուցչություններ, ուր 2006թ. հունվարի 1-ի դրությամբ կենտրոնացված են ամբողջությամբ վերցրած 5759 ֆոնդ՝ 3,419,353 պահպանման միավորներով: Արխիվում պահպանվող բոլոր փաստաթղթերը մատչելի են օգտագործողների համար, բացառությամբ անձնական եւ ընտանեկան գաղտնիքի մասին տեղեկություններ տարածող, նաեւ ոչ բավարար պահպանվածության վիճակ ունեցող փաստաթղթերի:

# IFC-ի «Սեւան» անվանումով պարտատոմսը՝ Հայաստանի կապիտալի շուկայում

Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC) երեկ թողարկել է 2 միլիարդ դրամի (մոտ 5 միլիոն դոլար) պարտատոմս՝ նպատակ ունենալով ամրապնդել Հայաստանի կապիտալի շուկան եւ խթանել մասնավոր հատվածի վարկավորումը: Այդ մասին տեղեկացանք IFC-ի երեւանյան գրասենյակից:

Պարտատոմսը IFC-ի առաջին դրամային թողարկումն է: Նաեւ առաջին պարտատոմսն է, որը թողարկվել է ՀՀ ոչ ռեզիդենտի կողմից, ինչպես նաեւ Հայաստանի կապիտալի շուկայում թողարկված առաջին օտարերկրյա կորպորատիվ պարտատոմսն է:

Հայաստանի ամենամեծ լճի անվանումը կրող «Սեւան» պարտատոմսերը IFC-ի կողմից իրականացվող 8 միլիարդ դրամ ընդհանուր արժողությամբ ծրագրի մաս են, որի շրջանակներում այս կառույցը կարող է պարտատոմսեր թողարկել այն ժամանակ, երբ համընկնեն շուկայական հնարավորությունները եւ երկրի մասնավոր հատվածի ֆինանսավորման կարիքները:

«IFC-ի նպատակն է աջակցել ներքին շուկաների զարգացմանը Հայաստանում: Մենք հույս ունենք, որ այս պարտատոմսերի թողարկումը հստակ ազդանշան կհանդիսանա բարձր վարկանիշ ունեցող արտասահմանյան այլ թողարկողների համար, որ Հայաստանը պատրաստ է ողջունել նրանց», նշել է IFC-ի փոխնախագահ եւ գանձապետ Ջինգդոնգ Հուան:

«IFC-ի թողարկած «Սեւան» պարտատոմսը բարձր որակի ներդրումների այլընտրանքային տարբերակ է առաջարկում ինստիտուցիոնալ ներդնողներին՝ միաժամանակ տրամադրելով ֆինանսական միջոցներ, որոնք կարող են կիրառվել տեղական տնտեսությանը աջակցելու նպատակով», ասել է IFC-ի Հարավային Կովկասի տարածաշրջանի ղեկավար **Թոմաս Լյուբեքը**: Ա. Մ.

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

# Հայաստանում կստեղծվի թմրամոլության եւ թմրամիջոցների դեմ պայքարի միջազգային կենտրոն

**Երեկ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի նախագահությամբ տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի հերթական նիստը:**

**Իր խոսքում Արթուր Բաղդասարյանը նախ տեղեկացրեց, որ հաջորդ տարի ՀԱՊԿ շրջանակներում**



**Հայաստանում ստեղծվելու է թմրամոլության եւ թմրամիջոցների պայքարի կենտրոն: «Հայաստանի Հանրապետությունը կլինի առաջին երկիրը, որտեղ նման կենտրոն կստեղծվի, եւ այդ կենտրոնը նաեւ կհամալրվի ժամանակակից սարքավորումներով, լաբորատորիաներով: Կենտրոնը կտեղակայվի ոստիկանության համակարգում»,- նշեց ԱԱԽ քարտուղարը:**

**Արթուր Բաղդասարյանի խոսքով՝ արդեն իսկ համապատասխան պայմանավորվածություններ ձեռք են բերված, կան ստորագրված փաստաթղթեր: «Ես կարծում եմ, որ սա մեր պետական մարմինների աշխատանքի համար շատ կարեւոր ենթակառուցվածք կլինի, քանզի հիմա քիմիական թմրամիջոցները շատացել են, իսկ Հայաստանը չունի որեւիցե լաբորատոր ժամանակակից սարքավորումներ դրանց դեմ պայքարելու համար: Կարծում եմ, որ այս ժամանակակից կենտրոնի ստեղծումը հնարավորություն կտա թմրամոլության դեմ պայքարն ավելի էֆեկտիվ առաջ տանելու»,- ընդգծեց Արթուր Բաղդասարյանը:**

**Հանձնաժողովը նիստում քննարկեց եւ հավանություն տվեց «Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ռազմավարության նախագծին», որը հաստատելու համար կներկայացվի Անվտանգության խորհրդի նիստին:**

**Այնուհետեւ Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի դիտարկման հանձնաժողովի անդամները զեկուցել են ՀՀ առողջապահության, աշխատանքի եւ սոցիալական հարցերի, կրթության եւ գիտության նախարարություններում եւ ՀՀ ԿԱ ոստիկանությունում «2009-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրով» նախատեսված միջոցառումների իրականացման արդյունավետության դիտարկման մասին:**

**Դիտարկումների արդյունքները ներկայացվում են ՀՀ նախագահին, որոնց հիման վրա նախագահը ստորագրում է համապատասխան իրավական ակտեր: Դիտարկումներով ի հայտ եկած աշխատանքային խնդիրները դառնում են հանձնաժողովի քննարկման եւ լուծման առարկա:**

**Նիստում նաեւ քննարկվել են թմրամոլության եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարին վերաբերող այլ հարցեր:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ամփոփվել են Մանկավարժական համալսարանի 2013 թ. գործունեության արդյունքները

ՀՀ վարչապետ, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ տեղի է ունեցել համալսարանի խորհրդի տարեվերջյան նիստը:




Մանկավարժական համալսարանի ռեկտոր **Ռուբեն Միրզախանյանը** ներկայացրել է բուհի 2013 թ. գործունեության հաշվետվությունը եւ 2014 թ. բյուջեի նախահաշիվը, զեկուցել կատարված աշխատանքների եւ առաջիկա քայլերի մասին: Նա տեղեկացրել է, որ վարչապետի հանձնարարականով 2013 թ. հունվարի 1-ից 40 տոկոսով բարձրացվել է դասախոսների աշխատավարձը, ստեղծվել են համակարգչային լսարաններ, ընթերցասրահներ, գրադարանի հումանիտար գիտությունների ընթերցասրահը հագեցվել է նոր տեխնոլոգիաներով, ինչը հնարավորություն է տալիս օգտվել էլեկտրոնային գրականությունից: Վերանայվել եւ որակապես բարելավվել են մի շարք ամբիոնների ուսումնական ծրագրերը, ինչի արդյունքում դասավանդումն իրականացվում է նոր սկզբունքով: Միջազգային համագործակցության շրջանակում նա, մասնավորապես, անդրադարձել է Ֆինլանդիայի Օուլու համալսարանի հետ իրականացվող ծրագրի արդյունքների, որոնք հնարավորություն են ընձեռել նոր մոտեցում որդեգրել մանկավարժական պրակտիկայի կազմակերպման գործընթացում: Համալսարանի ռեկտորի տեղեկացմամբ՝ 2013 թ. ուսանողների ուսման վարձավճարը չի բարձրացել, եւ 2014 թ. եւս ուսման վճարի ավելացում չի նախատեսվում: Պարոն Միրզախանյանը նշել է, որ համալսարանի 2013 թ. բյուջեից կատարված 350 մլն դրամ խնայողության հաշվին հնարավորություն է ընձեռվել բարձրացնել պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձը:

Խորհրդի անդամներն իրենց ելույթներում գոհունակությամբ են խոսել համալսարանում հաշվետու տարում իրականացված բարեփոխումների մասին՝ կարեւորելով, մասնավորապես, ամբիոնների կողմից էլեկտրոնային հաշվետվությունների տրամադրման համակարգի ներդրումը, օտար լեզուների դասավանդման ծավալի ավելացումը, ամբիոնների տեխնիկական վերազինումն ու հագեցվածությունը եւ այլն:

Խորհուրդը բավարար է գնահատել համալսարանում 2013 թ. կատարված աշխատանքները եւ հաստատել 2014 թ. բյուջեի նախահաշիվը:

Նիստի ավարտին վարչապետ Տիգրան Սարգսյանը խորհրդի անունից շնորհավորել է ՀՀ կրթության եւ գիտության նախարարի տեղակալ Մանուկ Մկրտչյանին ծննդյան առթիվ, մաղթել հաջողություն եւ արդյունավետ աշխատանք:

# Միջազգային ուսումնասիրության արդյունքներով Orange-ի ցանցը Հայաստանում լավագույնն է սմարթֆոններով բջջային ինտերնետից օգտվելու համար

P3 գերմանական աուդիտորական ընկերության կողմից Հայաստանում եւ եվրոպական մի շարք այլ երկրներում կատարված միջազգային ուսումնասիրության արդյունքներով, 3G ինտերնետից սմարթֆոններով օգտվելու արագության չափանիշով Օրանժ Արմենիայի 3G+ ցանցն առաջինն է Հայաստանի օպերատորների եւ առաջին անգամ՝ նաեւ եվրոպական երկրներում Orange-ի մասնաճյուղերի շարքում: Միջազգային չափանիշներին համապատասխան իրականացված ուսումնասիրության ընթացքում գնահատվել են մի շարք պարամետրեր, ինչպես մուտքը վեբ կայքեր՝ ներառյալ YouTube-ի գլխավոր էջ, տեսանյութերի դիտումն ինտերնետով, էլեկտրոնային հաղորդագրությունների առաքումն ու ստացումը, ֆայլերի վերբեռնումն ու ներբեռնումը, տրված հրամանին համակարգի արձագանքին սպասման ժամանակը եւ վեբ կայքեր մուտք գործելու համար պահանջվող ժամանակը:




«Հայաստանում եւ անգամ Orange-ի եվրոպական մասնաճյուղերի շարքում առաջինը ճանաչվելը մեզ համար կարծես ամանորյա նվեր լինի, որը պարգեւատրում է մեր աշխատակիցների ջանքերը: Ամբողջ տարի մենք աշխատել ենք, որպեսզի Orange-ի խանութներում ստեղծենք սմարթֆոնը լավ առաջարկի հետ ձեռք բերելու ամենագրավիչ պայմանները. լայն ընտրություն, լավ գին, ապառիկ 0%-ով, լավագույն հետվաճառքային սպասարկումը, հեռախոսների ապահովագրություն: Այժմ մեզ համար շատ ուրախալի է նշել, որ երբ Orange-ի խանութներում բաժանորդները ձեռք բերեն սմարթֆոններ մեր ծառայությունների հետ միասին, նրանք նաեւ կօգտվեն բջջային ինտերնետի լավագույն որակից ու արագությունից»,- ասաց Օրանժ Արմենիայի գլխավոր տնօրեն **Ֆրանսիս Ժելիբտերը**:

Հայաստանում փորձարկումներն իրականացվել են 2013թ. հոկտեմբերի 23-ից նոյեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում Երեւան, Գյումրի, Վանաձոր եւ Էջմիածին քաղաքներում: Փորձարկումներն իրականացվել են նշված քաղաքների կենտրոններում, գործարար ու առեւտրային շրջաններում եւ արվարձաններում:

Ուսումնասիրությունն իրականացվել է Orange Խմբի պատվերով, միջազգային առաջատար «P3 Communications» անկախ խորհրդատվական ընկերության կողմից: Այս ուսումնասիրությունը հեռահաղորդակցության ոլորտում իրականացվող ուսումնասիրությունների շարունակական արշավի մի մասն է կազմում, որն ուսումնասիրում է Orange-ի եվրոպական շուկաներում 3G ցանցով շարժական ինտերնետ ծառայություններ մատուցող օպերատորների ցանցերի որակը:

ՄՈՍԿՎԱ

# Հաստատեցին «քարտեզը» մի ճանապարհի, որով Հայաստանը կընթանա դեպի անորոշություն

*1-ին էջից*

**ՌԴ նախագահը նաեւ տեղեկացրել է, որ ավարտին են մոտեցել նմանատիպ քարտեզ կազմելու աշխատանքները նաեւ Ղրղզստանի հետ, թեեւ այդ երկրի կողմից առաջ քաշված ինչ-ինչ հարցեր են մնացել լուծելու: Հույս հայտնելով, որ ղրղզ գործընկերների հետ առկա խնդիրները լուծում կգտնեն, Պուտինը հայտարարել էր, որ հենց այդ նպատակով էլ երեկվա նիստին հրավիրվել էին Հայաստանի եւ Ղրղզստանի նախագահները:**

**Որ այս քարտեզը պատրաստվում էին հաստատել, արդեն իսկ գաղտնիք չէր, հատկապես որ Հայաստանը գլխապտույտ արագությամբ է փորձում լցնել այն բոլոր բացերը, որ առկա են Մաքսային միության ճանապարհին: Սակայն հետաքրքրական է, որ Պուտինը հարկ է համարել նույն ասուլիսում շեշտել, թե «եվրոպական եւ եվրասիական ինտեգրումները կարող են արդյունավետորեն լրացնել միմյանց»: Ավելին, Պուտինի մատուցմամբ, հենց այս մոտեցումից էլ բխում են գործադրվող ջանքերը, հատկապես որ նոր տարվա սկզբին պատրաստվում է Ռուսաստան-Եվրոմիություն հանդիպում, որտեղ ռուսական կողմը ցանկանում է քննարկել նաեւ այս հարցը:**

**Պուտինի ներկայացմամբ, Ռուսաստան-Բելառուս-Ղազախստան նախագահների մակարդակով հանդիպումները կշարունակվեն տարին առնվազն երեք անգամ ձեւաչափով՝ «պահպանելու ինտեգրման աշխատանքների բարձր տեմպը նաեւ հաջորդ տարի»:**

**Հաջորդ տարի մայիսի 1-ին էլ Պուտինը ցանկանում է ստորագրման համար պատրաստ տեսնել արդեն Եվրասիական միության ստեղծման պայմանագիրը, որի՝ ազգային խորհրդարաններում վավերացումից հետո միությունն իր ամբողջ ձեւաչափով կսկսի գործել արդեն 2015թ. հունվարի 1-ից: Ամեն դեպքում, ներկա դրությամբ, պայմանագրի ինստիտուցիոնալ հատվածի առնչությամբ հավանություն են տվել ինչպես Ռուսաստանը, այնպես էլ Բելառուսն ու Ղազախստանը: Ըստ Պուտինի, փաստացի համաձայնեցվել են ստեղծվելիք միության գործունեության հիմնական սկզբունքները, որին կհաջորդի պայմանագրի գործառնական կամ ճյուղային հատվածի նախապատրաստումը:**

**Բոլոր պարագաներում, ստեղծվելիք միության համատեքստում, ըստ Պուտինի, համամենաշնորհային օրենսդրությունն է ներդաշնակեցվում, եւ արդյունքում եվրասիական տնտեսական հանձնաժողովը մրցակցության միասնական կանոնների պահպանման վերահսկողության լիազորություններ կստանա, իսկ հնարավոր խախտումները կքննվեն ԵՎՐԱԶԵՍ-ի դատարանի կազմում գործելիք հատուկ գերատեսչության կողմից:**

**Հայաստանի կողմից արդեն պաշտոնական հաղորդագրության համաձայն, «ճանապարհային քարտեզ» ասվածը Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ պետությունների ղեկավարների մակարդակով որոշումն է Մաքսային միությանը եւ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի Հանրապետության միանալու միջոցառումների ծրագրի մասին:**

**Հանձնարարվել է Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարություններին, Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հետ համատեղ ապահովել ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը: Եվրասիական տնտեսական հանձնաժողովին հանձնարարվել է նաեւ վարել ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքի մոնիտորինգ եւ Բելառուսի Հանրապետությանը, Ղազախստանի Հանրապետությանն ու Ռուսաստանի Դաշնությանը տեղեկացնել մոնիտորինգի արդյունքների վերաբերյալ:**

**Հիշյալ որոշման համաձայն՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովը ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման աշխատանքի ընթացքի մասին պետք է զեկուցի պետությունների ղեկավարների մակարդակով Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի հերթական նիստին:**

**«Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի անդամ-պետությունների եւ Հայաստանի Հանրապետության միջեւ ինտեգրացիոն գործընթացների խորացման նպատակով, ինչպես նաեւ ընդունելով Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի անդամ-պետությունների ու Հայաստանի Հանրապետության փոխշահավետ տնտեսական համագործակցության հետագա զարգացման անհրաժեշտությունը, սատարելով Հայաստանի Հանրապետության մտադրությանը՝ դառնալ Եվրասիական տնտեսական միության լիիրավ անդամ, փաստաթուղթը ստորագրած չորս երկրների նախագահները հայտարարել են միջոցառումների ծրագրի («ճանապարհային քարտեզի») հաստատման մասին եւ հանդես են եկել «ճանապարհային քարտեզով» նախատեսված միջոցառումների իրականացման օգտին՝ եվրասիական ինտեգրացիոն նախագծին Հայաստանի միանալու նպատակով», տեղեկանում ենք պաշտոնապես՝ ոչ մի տեղեկացում չստանալով Ղազախստանի հատուկ կարծիքի մասին:**

**Ինչեւէ, ընդհանրացնելով նշենք, որ Հայաստանը շատ մեծ արագությամբ ստորագրում է բազմաթիվ փաստաթղթեր, որոնք տանում են դեպի Մաքսային միություն, սակայն այդ փաստաթղթերի վերաբերյալ ոչ քննարկումներ են տեղի ունենում, ոչ էլ դրանց թեր ու առավել կողմերն են ներկայացվում: Եվ, որպես կանոն, նման իրավիճակներում միայն գործնականում են ի հայտ գալիս բոլոր խնդիրները, որոնց լուծումն արդեն հետադարձ տարբերակով մեծապես բարդ է լինում:**

# Այսպես ճանապարհ չկա

Հիշո՞ւմ եք թագավորի եւ ծերունի իմաստունի հանդիպում-զրույցը, երբ թագավորը շրջում է իր երկրով մեկ եւ հանդիպում իմաստունին, ում երբ հարցնում է, թե ո՞վ ես դու, ստանում է պատասխան՝ ես ոչինչ եմ: Հետո ծերունին բացատրում է, որ արքան էլ՝ իր ծիրանիով, թագավորական փառքով ու պերճությամբ, բանակի հզորությամբ ի վերջո գնում է ոչինչ դառնալու ճանապարհով, քանի որ ամեն ինչի վերջը ոչինչն է... Ուրեմն, եթե այս հեքիաթ-պատմությունից ելնենք, ապա ինչպես էլ գնանք, ի վերջո ոչնչին ենք հասնելու եւ ոչինչ ենք դառնալու՝ բոլորս: Խնդիրն այն է, որ դեպի ոչինչ տանող, բայց բազմաթիվ սխրագործություններով ու փորձություններով, նաեւ պարգեւներով լի այս ճանապարհին զուգահեռ կա եւս մեկը՝ պատրանքային մի ճանապարհ, որը ոչ մի տեղ չի տանում, ճանապարհ, որն իրականում չկա:

Երբ խորհրդարանում լսում ենք որոշ պատգամավորների եւ հետո կարդում ենք այդ պատգամավորների մասին պատմող, նրանցից հարցազրույց վերցրած լրագրողական նյութերը, հասկանում ենք, որ մենք հիմա գնում ենք մի ճանապարհով, որը չկա:

Ժամանակ առաջ ՀՀԿ-ական պատգամավոր Մանվել Բադեյանը լրագրողներին կեսկատակ-կեսլուրջ (հիմա ենք հասկանում, որ շատ էլ լուրջ) ասաց, թե լրագրողներն իրենց (նկատի ունի քաղաքական գործիչներին) պետք է վճարեն, որպեսզի իրենք լրագրողներին հարցազրույց տան: Բադեյանի տրամաբանությունը հետեւյալն էր. եթե լրագրողական նյութը լրագրողի աշխատանքն է, հացը, ապա լրագրողն իր հացի համար պետք է վճարի, ինչպես բոլորը: Սակայն պատգամավորի այս «նախաձեռնությունը» ընթացք չստացավ... Անցավ ժամանակ, եւ նույն Բադեյանը ԱԺ-ի միջանցքում լրագրողների հանդիպելով նախ «բացականչեց»՝ «արա», ապա եւ հորդորեց վերջիններիս իրեն «ախմախ հարցեր չտալ»: Որպես այդպիսին Բադեյանը որակել էր լրագրողի հարցը, թե օրենք չի՞ խախտվում արդյոք, երբ «Ի՞նչը, որտե՞ղ, ե՞րբ» հեռուստախաղը հեռարձակվում է ռուսերեն: Հետո Բադեյանն ասել էր. «Եթե փողոցի եզդին էս հարցը տա, ես էլի կհասկանայի, բայց դուք էդքան մակարդակ չունե՞ք, արա...»: Հիշեցնենք՝ «արա»-ն պատգամավորի խոսքում պետք է ընկալել՝ զուտ որպես բացականչություն, ոչ թե դիմելաձեւ:

Անցավ ժամանակ, եւ որոշ լրագրողներ, որոշ կարճ ժամանակով դադարելով զբաղվել լրագրությամբ, ԱԺ-ում ՀՀԿ խմբակցության առջեւ փոքրիկ պիկետ կազմակերպեցին: Լրագրողներից մեկի ձեռքին հետեւյալ տեքստով ցուցանակ կար՝ «Խելքի եկեք, արա»: Այն բարձրացրած լրագրողը, թեեւ չմեկնաբանեց, բայց կարելի էր հասկանալ, որ այս դեպքում էլ «արա»-ն ոչ թե դիմելաձեւ է՝ ՀՀԿ խմբակցությանը, կամ դրա ներկայացուցիչներից մեկին, այլ պարզապես բացականչություն է: Այս ընթացքում ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը բոլորովին այլ առիթով հայտարարեց. «Հանգստյան օրերին կարելի է մի օրենսդրական նախաձեռնություն մշակել, որով կարգելվի լրագրողներին՝ որակումներ տալ»: ՀՀԿ խմբակցության ղեկավարին դուր չէր եկել, երբ լրագրողներից մեկը իր մասին նյութում գրել էր՝ «Գալուստ Սահակյանը ջղաձգվեց»: Սահակյանը նաեւ հայտարարեց, թե «կարելի է բարձրացնել նաեւ որոշ լրագրողների ԱԺ-ի աշխատանքները լուսաբանելու հավատարմագրից զրկելու հարցը». հասկանալի է, որ Գալուստ Սահակյանը նկատի ուներ այնպիսի լրագրողների, ովքեր սիրում են որակումներ տալ:

Դժվար է ասել, ի՞նչ կազմ կհավաքի խորհրդարանում «լրագրողներին իրենց տեղը ցույց տալ ցանկացող» պատգամավորական կազմը կամ ի՞նչ տեսք կունենա Գալուստ Սահակյանի հեղինակությամբ «հանգստյան օրերին» ստեղծվելիք օրինագիծը, բայց միանշանակ է, որ սա հենց այն ճանապարհն է, որը ոչ թե դեպի ոչինչ է տանում, այլ չկա: Փոխադարձ անհանդուրժողականությունը, որի անթույլատրելիության մասին պարբերաբար խոսում է ՀՀ նախագահը, կամ ԱԺ նախագահը՝ կոչ անելով ավելի հանդուրժող լինել միմյանց նկատմամբ, հենց սա է: Իրար ամեն գնով պատասխանելը սեփական անմեղությունը դեռեւս չի ապացուցում, որեւէ մեկի ջղաձգությունը նկարագրելը նյութին ոչ միշտ է պրոֆեսիոնալիզմ հաղորդում՝ ցույց տալով նաեւ լրագրողի հոգեբանական գիտելիքները: Քաղաքական գործիչ լինելը չի ազատում նաեւ «ախմախ» հարցերին պատասխանելու պարտավորությունից, ընդ որում, լռությունը հաճախ եւս կարող է դիտարկվել որպես պատասխան:

Հակառակ պարագայում, իհարկե, կարելի է եւ պատժել, սաստել, կասեցնել, զրկել հավատարմագրերից, բացականչել «արա», վիրավորել, ապակիներ թխկթխկացնել, դավաճաններ փնտրել եւ գտնել, բայց ինչպե՞ս սա անվանել, եթե ոչ՝ համատարած ջղաձգում, եւ ո՞ւր կտանի մեզ այս ճանապարհը, ճանապարհը, որն ուղղակի գոյություն չունի, քանի որ կա մի ճանապարհ, որը բոլորիս ի վերջո կդարձնի ոչինչ՝ անկախ նրանից՝ լրագրո՞ղ ենք եղել, քաղաքացիական ակտիվի՞ստ, քաղաքական գործի՞չ, թե՞ պետության ներսում շրջող թագավոր:

ՆՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# Ո՞վ է լրագրողը

*1-ին էջից*

Ճիշտ ասած՝ ես էլ եմ համաձայն երիտասարդ ժառանգական **Դավիթ Սանասարյանի** հետ (իր տեսակետը նա արտահայտել էր սոցցանցում), թե լրագրությունը չի բացառում ողնաշարով քաղաքացի լինել: Սակայն մի դեպքում ողնաշարով քաղաքացին քաղաքականների համար նրանք են, որոնք իրենց տեսակետներն են առաջ մղում, եւ նրանք չեն, ովքեր այդ տեսակետները սխալական են համարում: Այստեղ շատ հեռու մնացին քաղաքացին էլ, լրագրողն էլ, առաջինն այն առումով, որ բոլորը նույն բանի մասին միատեսակ չեն կարող մտածել, երկրորդն այն պատճառով, որ լրագրությունը բավարար չի համարում ճշմարտությունը բացահայտելու եւ տեղ հասցնելու, ու այդպե՛ս ազդելու որոշումների կայացման վրա:




Ու ասեմ, որ Ազգային ժողովում բողոքի պաստառներ պարզած լրագրողներից մի քանիսին անձամբ ճանաչում ու հարգում եմ (կարելի է ասել՝ անգամ սիրում եմ՝ **Նարինե Իրիցյանին**, **Գրիշա Բալասանյանին**, **Տիգրանուհի Մարտիրոսյանին**): Բայց, իրոք, միթե ավելի կարեւոր չէր **Արփի Մախսուդյանի** արածը, որն ուղիղ եթերում էր ապահովում բոլոր քաղաքացիների տեղեկացված լինելու եւ քննարկվող հարցի վերաբերյալ տեսակետ ունենալու հնարավորությունը: Ու այս ուղիղ հարցին ուղիղ պատասխան էլ ակնկալվում է՝ երկրորդը, փաստորեն, ա՛յդ կերպ դրսեւորեց իր ողնաշարով քաղաքացի լինելը՝ մնալով լրագրող:

Ու արժե, որ այս պահն առանձնացվի, զատվի իրարից՝ ո՞վ է ուզում քաղաքացի լինել, ով՝ լրագրող, դրանք երկուսն էլ պատվաբեր են, ուղղակի պետք է ընտրել, համատեղել հնարավոր չէ, որ ոչ լրագրողը տուժի, ոչ քաղաքացին:

Մյուս կողմից՝ կան բացառիկ հարցեր, որոնց ժամանակ մի պահ կարող է սահմանը ջնջվել, երբ հարցը վերաբերի բոլորին ու ամենքի ճակատագրին, ու այդ բոլորի մեջ նաեւ լրագրողի: Ու գազային համաձայնագրի վավերացումը կարելի էր երկրի համար բացառիկ այդ պահը համարել՝ գուցե թե մի փոքր թուլանալով ու չօգտագործելով «լրագրողական էթիկա» արտահայտությունը, քանի որ ներսում պաստառ պահած լրագրողներին կարելի է հասկանալ, սակայն միեւնույն է, հարգելով, ու անգամ սիրելով նրանց՝ միանշանակ պատասխան կա, թե նրանցից ինչը սպասելն է ավելի լավ՝ մասնագիտորեն լուսաբանո՞ւմը, թե՞ քաղաքացիական ակտիվության դրսեւորումը: Այս առումով մի հետաքրքրական շեշտադրում արել էր Ժուռնալիստների միության նախագահ **Աստղիկ Գեւորգյանը**՝ նշելով, թե երբեմն էթիկայի փոքրիկ խախտումը ստվերում է օբյեկտիվորեն շարադրված նյութը, ու դա շատ ավելի քննարկման թեմա է, մինչդեռ երեւի ԱԺ-ում զգացմունքային է եղել պահը, լրագրողները տրվել են զգացմունքներին եւ էթիկայի որոշ խախտումներ թույլ տվել: Բայց եւ՝ «լրագրողները քաղաքականությամբ չպետք է զբաղվեն՝ ի վերջո հավատարմագրված է որպես ԱԺ գործունեությունը լուսաբանող լրագրող»:

Իհարկե, պետք չէ ամեն ինչ ծայրահեղացնել, քանի որ լրագրողը եւս մարդ է ու ոչ թե մեքենա, ու ասենք՝ եթե այդ պահին սպանություն է կատարվում, միշտ կարող է ընտրություն կատարել՝ նկարահանե՞լ, թե՞ կասեցնել մարդասպանին. «Ձեր մատնանշած էթիկայի նորմերը եթե խախտել եմ, ապա արել եմ ԳԻՏԱԿՑՎԱԾ, որովհետեւ ինձ համար ավելի գերակա է պետության եւ հասարակության շահը, քան տաքուկ սենյակում փափուկ բազկաթոռի մեջ մխրճված էթիկայից խոսելը: Ներողություն եմ խնդրում, որ ձեր՝ լրագրության ոլորտի փորձագետներիդ ու էթիկայի մասնագետներիդ անունն ու հեղինակությունն այսօրվա իմ գործողություններով «խայտառակել» եմ: Իսկ ձեր խորհուրդներից, ցավում եմ, բայց չեմ կարող օգտվել», գրել էր «Հետքի» լրագրող Գրիշա Բալասանյանը:

Այս բացառիկ դեպքն, ի վերջո, կարելի է հասկանալ: Բայց առիթը չօգտագործել եւ ընդհանրապես ընդհանրացումներ անելու համար չենք կարող: Արդյո՞ք այս մի դեպքն է լրագրողներին մղել դուրս գալ լրագրողի կաշվից, եւ առհասարակ՝ Հայաստանի մեդիա դաշտում եւ նրան կից քաղաքական դաշտում իշխող բարքերը չե՞ն այս նախադեպը սնող հողը. էլ ինչու են մեր քաղաքական գործիչները բարկանում լրագրողների վրա:

Չէ՞ որ մաքուր մեդիա դաշտ Հայաստանում որպես այդպիսին, գոյություն չունի, անգամ՝ որպես մաքուր բիզնես գոյություն չունի: Մեր լրատվամիջոցները եւ այդպիսով նաեւ նրա լրագրողները կողմ են: Կողմ են, քանի որ համարյա բոլոր լրագրողների թիկունքում կողմեր կան՝ այս կամ այն քաղաքական ուժը կամ քաղաքական գործիչը: Ու դա այսպես է արդեն շատ տարիներ: Կողմերը մի կերպ են պատկերացնում կամ չեն պատկերացնում լրագրությունը՝ որպես այդպիսին: Նրանց կարծիքով՝ լրագրողը պետք է պաշտպանի իրեն սնող քաղաքական ուժի տեսակետները եւ մյուսներին ջարդի: Ու այս կացնային մեթոդներով աշխատում է ողջ լրագրողական դաշտը՝ չնչին բացառություններով: Լրատվամիջոցներին պատվեր են իջեցնում այս կամ այն քաղաքական ուժի ու քաղաքական գործչի դեմ, հետո դիմացի քաղաքական ուժն է պատվեր իջեցնում այս մի քաղաքական ուժի դեմ իրեն հարող լրատվամիջոցներով, հետո այն առաջինը կանգնում ու լրագրողների մոտ բողոքում է պատվեր իջեցնողներից ու պատվեր կատարողներից: Հիմա այս պատվեր կատարողները կո՞ղմ են, թե՞ լրագրող, քաղաքականությա՞մբ են զբաղվում, թե՞ լրագրությամբ: Ու պատկերացրեք, հենց այդպիսիք են ամենից բարձր գոռում անաչառ լրատվության մասին: Առողջացրեք քաղաքական բարքերը, եւ կառողջանա լրագրողը, կմտածի ոչ թե պայքարելու, այլ միայն ու միայն մասնագիտորեն բարձր լրագրություն մատուցելու մասին, կողմ չլինելու մասին: Հիմա համատարած կողմ դարձած լրագրողներից անբնական բան է պահանջվում՝ չպաշտպանել, ասենք, ընդդիմության կամ իշխանության, կամ այս կամ այն օլիգարխի շահերը, պահպանել լրագրողական էթիկայի կանոնները. հավատո՞ւմ եք ձեր ասածին:

Առհասարակ՝ կողմ լինելու վատ սովորույթը հայ լրագրության մեջ վաղուց է առկա, եւ դրա հիմքը գալիս էր հենց քաղաքականությունից: Ժամանակին, երբ ընդդիմությունը առաջին նախագահի ու նրա վարչակազմի դեմ էր պայքարում՝ ամեն մամուլի ասուլիսի, ամեն առիթով դատափետում էր լրագրողներին, թե՝ ձեր օգնությամբ միայն կարող ենք հաղթանակի հասնել: Այսինքն՝ բացահայտ պատվեր էր իջեցնում, երբեմն չխորշելով դատապարտել այն լրագրողներին, ովքեր իրենց կողմնակիցը չէին: Եղբայր, դու դարձի՛ր գործոն, լրագրողն այդ դառնալուդ մասին կպատմի, բայց դու ուզում ես, որ չեղած տեղը լրագրողը քեզ դարձնի գործոն: Ու այդ մտայնությունը եկել է ու եկել է, ստեղծվել են «մեր» եւ «ձեր» լրագրողներ, «ընդդիմադիր» եւ «իշխանամետ» լրագրողներ, ու հավասարապես երկուսի սխալները քննադատող լրագրողը սպիտակ ագռավ է մեր մեդիաքաղաքական սերտաճած դաշտում:

# Սնոուդենն իր առաքելությունը կատարված է համարում



ԱՄՆ Ազգային անվտանգության գործակալության (ԱԱԳ) եւ Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենը «Վաշինգտոն փոստ» թերթին տված հարցազրույցում հայտարարել է. «Ինձ համար, անձնական բավարարվածության իմաստով, առաքելությունն արդեն ավարտված է: Ես արդեն հաղթել եմ»:

ԱԱԳ տասնյակհազարավոր գաղտնի փաստաթղթերի հրապարակման կապակցությամբ նա մասնավորապես հայտարարել է. «Ես չէի ուզում փոխել հասարակությունը: Ուզում էի հասարակությանը ընձեռել իրեն փոխելու հնարավորություն»:

Թերթի աշխատակից Բարտոն Գելմանի հետ զրուցելիս Սնոուդենը խոստովանել է, որ ամերիկյան հատուկ ծառայությունների գործունեությանն առնչվող նյութերը հրապարակելիս ինքը գործել է «կուրորեն» եւ վստահ չի եղել, թե կարժանանա հասարակական լայն աջակցության: Այդուհանդերձ, Սնոուդենի խոսքերով, ինքը կնախընտրեր «փորձել ինչ-որ բան անել, քան ոչինչ չանել»:

ԱԱԳ մյուս աշխատակիցների նման Սնոուդենը ժամանակին ստորագրել է այսպես կոչված «ձեւ 312», այսինքն՝ գաղտնի տվյալներ չհրապարակելու պարտավորագիր: Ընդսմին նա հայտարարում է, որ ինքը գաղտնիք պահելու երդում չի տվել. երդվել է միայն երկրի սահմանադրության առջեւ:

«Ես չեմ փորձում հաղթել ԱԱԳ-ին, այլ աշխատում եմ ԱԱԳ-ի բարելավման ուղղությամբ: Հենց հիմա էլ շարունակում եմ աշխատել ԱԱԳ-ի համար: Սակայն նրանք դա չեն հասկանում», ասել է Սնոուդենը իր հարցազրույցում:

# Քննարկվում է մայրաքաղաքը Թեհրանից տեղափոխելու նախագիծը

**Իրանի խորհրդարանը քննարկում է մայրաքաղաքը Թեհրանից երկրի այլ քաղաք տեղափոխելու եւ կառավարությունն այնտեղ տեղափոխելու նախագիծը, հաղորդում է «Արմենպրես»-ը՝ հղում անելով ԻՌՆԱ գործակալությանը:**

**«Եթե օրենսդիրներն ընդունեն այդ նախագիծը, ապա կձեւավորվի հատուկ խորհուրդ, որն առաջիկա երկու տարվա ընթացքում կորոշի, թե որ քաղաքը կդառնա ներկայիս մայրաքաղաքի լավագույն այլընտրանքը»,-ընդգծել է գործակալությունը:**

**Առայժմ պարզ չէ՝ Իրանի որ քաղաքների մասին է խոսքը:**

**Թեհրանի բնակչությունն արդեն կազմում է 12 միլիոն մարդ: Քաղաքը բախվում է բազմաթիվ խնդիրների, որոնց թվում են՝ անբարենպաստ էկոլոգիան, ավտոմեքենաների խցանումները եւ հանցավորության բարձր մակարդակը: Թեհրանի բնակչությունը վերջին տասը տարում ավելացել է երեք անգամ:**



**Ինչպես նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը, տարեցտարի ավելի ու ավելի շատ իրանցիներ են աշխատանք գտնելու եւ ավելի լավ կյանքի ակնկալիքով գյուղական վայրերից տեղափոխվում մայրաքաղաք:**



# Ըստ «Հաարեցի»՝ Մանդելային Եթովպիայում մարզել են «Մոսսադի» գործակալները



1962 թ. Եթովպիայում ՀԱՀ ապագա առաջին սեւամորթ նախագահ Նելսոն Մանդելային մարզել, ձեռնամարտի հնարքներ եւ դիվերսիոն աշխատանքի մեթոդներ են սովորեցրել իսրայելական հետախուզության՝ «Մոսսադի» գործակալները: Այդ են վկայում օրերս Իսրայելի հրապարակած արխիվային փաստաթղթերը, գրում է հարավաֆրիկյան Mail&Guardian հրատարակությունը:

«Մոսսադի» աշխատակիցներից մեկը 1962 թ. հոկտեմբերի 11-ին Իսրայելի ԱԳՆ ուղարկած «Սեւամորթ հերոսը» վերնագրով նամակում մեջբերում է այն զրույցի սղագրությունը, որի մասնակիցները քննարկել էին Եթովպիայում պատրաստություն անցնող ռոդեզիացի ոմն Դեւիդ Մոբսարիի հարցը:

Հոդվածում պարզաբանվում է, որ «Սեւամորթ հերոսը» մականունն է, որ այն տարիներին կրում էր հակաապարթեիդյան պայքարի հայտնի մարտիկ, ANC ռազմականացված խմբավորման նախկին պարագլուխ Մանդելան:

Տվյալ պատմությունն առաջինը հրապարակած իսրայելական «Հաարեց» թերթը իր հերթին պնդում է, որ նամակում օգտագործված «եթովպացիներ» տերմինը, դատելով ըստ ամենայնի, եղել է Եթովպիայում «Մոսսադի» գործակալների պայմանական անվանումը:

«Նա մեր մարդկանց ողջունում է եբրայերեն «շալոմ» բառով, ծանոթ է հրեական սփյուռքի ու Իսրայելի խնդիրներին եւ կրթված մարդու տպավորություն է թողնում: Եթովպացիները փորձում են նրան դարձնել սիոնիստ»՝ ահա Մանդելային ինչպիսի բնութագիր էր տրված այդ նամակում:

Արխիվային փաստաթղթերի համաձայն, Մանդելային հետաքրքրել են Իսրայելի ստեղծումից առաջ «Խագանայի» մարտիկների եւ հրեական ինքնապաշտպանության ջոկատների կիրառած պայքարի մեթոդները:

Նելսոն Մանդելայի հիմնադրամը արդեն հայտարարել է, որ Մանդելայի անձնական արխիվներում չեն հայտնաբերվել իսրայելցի օպերատիվ աշխատողների հետ համագործակցության վկայություններ: Հիմնադրամի ղեկավարությունը պնդում է, թե ՀԱՀ հանգուցյալ նախագահը ռազմական գործ սովորել է Մարոկկոյում ալժիրյան դիմադրության շարժման մարտիկներից, ինչպես նաեւ Ադիս-Աբեբայում՝ եթովպական ապստամբական ճամբարում:

**Պ. Ք.**

# Եգիպտոսի վարչապետը «Մուսուլման եղբայրներին» անվանեց ահաբեկիչներ

*Հուժկու պայթյուններ ոստիկանական վարչության մոտ*

Դեկտեմբերի 24-ի առավոտյան Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեից 120 կմ հյուսիս ընկած Մանսուրա քաղաքում տեղի է ունեցել ահաբեկչություն, որն ամենախոշորն էր «Մուսուլման եղբայրներ» իսլամիստական շարժման թեկնածու նախագահ Մուհամմեդ Մուրսիի տապալումից (2013-ի հուլիս) ի վեր: Ֆրանսպրես գործակալության տվյալներով, քաղաքի ոստիկանական վարչության շենքի մոտ տեղադրված երեք ռումբերից երկուսը պայթել են գրեթե միաժամանակ: Երրորդ ռումբը հայտնաբերվել է շենքի մոտ կանգնեցված մի ավտոմեքենայում եւ վնասազերծվել է:

Երկու պայթյուններն այնքան ուժգին են եղել, որ մասամբ ավերվել է ոչ միայն ոստիկանության շտաբի շենքը, այլեւ հարեւան շենքը, որտեղ կային բանկ եւ 5 խանութ: Ոչնչացել կամ լրջորեն վնասվել են տասնյակ ավտոմեքենաներ: Եգիպտոսի անվտանգության ուժերի ներկայացուցիչների խոսքերով, պայթյունի ալիքը զգացվել է ահաբեկչության վայրից 20 կմ հեռավորության վրա: Նախնական տվյալներով, զոհվել են 14 եւ վիրավորվել առնվազն 200 անձինք, մեծ մասը՝ իրավապահ մարմինների աշխատակիցներ: Վիրավորների մեջ է Մանսուրայի ոստիկանական վարչության պետը: Պայթյունները որոտացել են այն պահին, երբ նա խորհրդակցություն էր անցկացնում առաջիկա հունվարի 14-15-ը նախատեսված նոր սահմանադրության հանրաքվեի կապակցությամբ:



Ահաբեկչության պատասխանատվությունը չի ստանձնել Եգիպտոսում գործող ծայրահեղական որեւէ կազմակերպություն: Չնայած դրան, վարչապետ Խազեմ ալ Բաբլաուին մեղադրել է «Մուսուլման եղբայրներ» իսլամիստական շարժմանը՝ ասելով, որ դրա անդամները «ցույց տվեցին իրենց արյունոտ դեմքը»: Խազեմ ալ Բաբլաուին «Մուսուլման եղբայրներ» շարժումն անվանել է ահաբեկչական կազմակերպություն: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրեսը, վկայակոչելով վարչապետի մամլո ծառայության հայտարարությունը:

2013-ի սեպտեմբերին Եգիպտոսի դատարանն արգելել էր «Մուսուլման եղբայրներ» շարժման գործունեությունը: Դատավճիռը կայացվել էր շարժման կողմնակիցների զանգվածային ելույթներից հետո, որոնց մասնակիցները բողոքում էին իսլամիստ նախագահ Մուհամմեդ Մուրսիի պաշտոնանկության դեմ:

Հուլիսի սկզբներին Մուրսիի տապալումից հետո Եգիպտոսում իշխանությունը փաստորեն անցավ զինվորականներին: Նոր ղեկավարությունը «Մուսուլման եղբայրներին» քանիցս մեղադրել է Սինայի թերակղզում ուժային կառույցների աշխատակիցների վրա հարձակումներ նախապատրաստելու մեջ:

ՕՐԱԿԱՐԳ

# «Լավագույն օտարալեզու ֆիլմ» անվանակարգի «Օսկարի» այս տարվա թեկնածուները

**76 երկիր ամերիկյան կինոակադեմիային են ներկայացրել «Օսկարի» մրցանակի արժանի ֆիլմեր: Վերջերս հայտնի է դարձել «Լավագույն օտարալեզու ֆիլմ» անվանակարգի թեկնածու ֆիլմերի ցանկը՝ ի թիվս դրանց Թոմաս Վինտերբերգի եւ Պաոլո Սորրենտինոյի «Մեծ գեղեցկություն» ֆիլմերը:**

**Այս ցուցակին հավակնող շատ ավելի հավանական համարվող ֆիլմեր դուրս են մնացել՝ անակնկալի բերելով շատերին, ինչպես՝ «Օսկարի» մրցանակաբաշխությանը ներկայացված Սաուդյան Արաբիայի առաջին ֆիլմը (Vadjda)՝ աղջկա եւ հեծանիվի մասին ազդեցիկ պատմությունը:**

**Այս տարվա Կաննի միջազգային կինոփառատոնի հաղթող ճանաչված «Ադելի կյանքը» ֆրանսիական ֆիլմը չի էլ առաջադրվել, փոխարենը տեղ են գտել ԱՄՆ-ում ցուցադրված որոշ ֆիլմեր:**

**«Լավագույն օտարալեզու ֆիլմ» անվանակարգի թեկնածուական ցուցակի կազմը հետեւյալն է՝ «Խզված միջավայր» (Բելգիա), «Դրվագ երկաթահավաքի կյանքից» (Բոսնիա-Հերցեգովինա), «Ծանր տետր» (Հունգարիա), «Երկու կյանք» (Գերմանիա), «Մեծ վարպետը» (Հոնկոնգ), «Որսը» (Դանիա), «Մեծ գեղեցկություն» (Իտալիա), «Անհետացող պատկեր» (Կամբոջա), «Օմար» (Պաղեստին): Այս իննյակից ընտրված հինգը կդառնան անվանակարգի հաղթողներ, որի մասին կհայտարարվի հունվարի 16-ին: Ամերիկյան կինոակադեմիայի 86-րդ մրցանակաբաշխության արարողությունը տեղի կունենա մարտի 2-ին (հանդիսավար՝ Էլեն ԴեՋեներես):**

Ս. Բ.

# «Եվրոտեսիլ»-ի հայաստանյան ներկայացուցչի անունը կիմանանք Ամանորի գիշերը




Հայաստանը պաշտոնապես հաստատել է իր մասնակցությունը «Եվրոտեսիլ-2014» երգի միջազգային մրցույթին եւ Ամանորի գիշերը Առաջին ալիքի տոնական եթերի ժամանակ, հայտնի կդառնա, թե այս տարի ով կներկայացնի Հայաստանը մրցույթին:

«Եվրատեսիլ-2014» երգի համաեվրոպական մրցույթը կանցկացվի Կոպենհագենի B&W Hallerne համերգասրահում: Այդ օրերին համերգասրահը կից տարածքի հետ կփոխակերպվի Եվրոտեսիլյան կղզու, որտեղ կհյուրընկալվեն մրցույթի մասնակիցները, լրագրողները եւ երկրպագուները: 2014 թվականի մրցույթը կկրի «Join Us» (Միացիր մեզ) խորագիրը կոչ անելով բոլոր երկրպագուներին միանալ եվրոպական սիրված մրցույթին, իսկ մրցույթի խորհրդանիշն ադամանդն է:

Մրցույթի կիսաեզրափակիչ փուլերը կկայանա մայիսի 6-ին եւ 8-ին, իսկ եզրափակիչը՝ մայիսի 10-ին:

Նշենք, որ Կոպենհագենը նախկինում 2 անգամ հյուրընկալել է Եվրոտեսիլը 1964 եւ 2001 թվականներին, իսկ 2005-ին այստեղ անց են կացվել մրցույթի 50-ամյակին նվիրված տոնակատարությունները:

Մ. Հ.

# Արգենտինյան տանգոյի երեկո Մարիո Ստեֆանո Պիետրոդարկիի հետ

Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբն ավանդաբար տարին ավարտում է տոնական համերգով: Այս տարի դեկտեմբերի 25-ին Արամ Խաչատրյան համերգասրահում նվագախումբը պատրաստում է տոնական համերգային ծրագիր նվիրված Ամանորին եւ Սուրբ Ծննդյան տոնին:

Ողջ համերգի ընթացքում հնչելու են արգենտինյան ռիթմեր Աստոր Պիացոլլայի ստեղծագործությունները Երեկոն հագեցած է լինելու տանգոյի կենսախինդ մեղեդիներով եւ ռիթմերով:

Երիտասարդական նվագախմբի հետ որպես մենակատարներ հանդես կգան հայ հանդիսատեսի կողմից շատ սիրված, աշխարհահռչակ իտալացի բանդոնեոնահար, ակորդեոնահար Մարիո Ստեֆանո Պիետրոդարկին եւ ֆլեյտահար Սառա Ռուլին:

Մ. Հ.

# Երեք բացառիկ ցուցադրություն արվեստի նոր հարթակում

Ինչպես ժամանակակից արվեստի, այնպես էլ հայկական կերպարվեստի անցած հարյուրամյակի լավագույն նմուշների հանդեպ կոմերցիոն հետաքրքրությունը բարձրացնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է միջավայրի քաղաքակիրթ զարգացում: Քաղաքակիրթ կամ կուլտուրական միջավայր ասելով հասկանում ենք փոխազդեցություն կենդանի գործընթաց ստեղծողի եւ դիտողի, ստեղծագործության եւ գնորդի միջեւ, իսկ աուկցիոնների, գալերիստի, արվեստաբանի, արվեստի մենեջերի խնդիրը այդ շփման կազմակերպումը եւ այն հետաքրքիր ձեւաչափերի ստեղծումն է, որոնք կգրավեն կոլեկցիոներների, արվեստագետների եւ հասարակության ուշադրությունը:

Դեկտեմբերի 22-ին «ԱԱ Աուկցիոնը» եւ www.hi-artonline.com նախագիծը բացում են արվեստի նոր հարթակ, որի խնդիրն է դառնալ կենդանի աճուրդների անցկացման վայր եւ լինել քաղաքում կերպարվեստի ամենաակտիվ կենտրոններից մեկը՝ ստեղծելով հենց այն մշակութային միջավայրը, որի մասին խոսվում է:

«ԱԱ Աուկցիոնը» իր դռները հասարակության առջեւ բացեց ընթացիկ տարվա դեկտեմբերի 21-ին, «Ոսկե դար» պատկերասրահում, որն առաջիկա տարում կդառնա աճուրդների, ցուցահանդեսների, եզակի ցուցադրումների եւ այլ նախագծերի անցկացման վայր:

## Եղիշե Թադեւոսյան. Գեղանկարչություն, գրաֆիկա, արխիվային նյութեր

Ցուցահանդեսը եզակի է նրանով, որ ներկայացնում է հայ մեծ առաջատար-գեղանկարչի 80 աշխատանք՝ արվեստի նվիրյալ, մասնավոր կոլեկցիոներ Վահագն Գրիգորյանի բացառիկ հավաքածուից: Բացի նախկինում չցուցադրված նկարներից, գրաֆիկական աշխատանքներից եւ էսքիզներից, այցելուները կարող են տեսնել գեղանկարչի լուսանկարները, հարազատներին ու մտերիմներին ուղղված նամակները, ինչպես նաեւ այլ եզակի նյութեր անձնական արխիվից: Լինելով ռուս մեծ նկարիչ, պատմական գեղանկարչության եւ բնանկարի վարպետ Վասիլի Պոլենովի աշակերտը՝ Եղիշե Թադեւոսյանը հայտնի դարձավ որպես արվեստում հայկական պլեների հիմնադիր: Հայկական գեղանկարչության դպրոցի ձեւավորման ժամանակաշրջանում Եղիշե Թադեւոսյանը մտավ պատմություն՝ դասվելով այնպիսի նկարիչների շարքին, ինչպիսիք են Այվազովսկին, Սուրենյանցը, Գայֆեջյանը, Բաշինջաղյանը, Սարյանը:

Լույսի նուրբ զգացողությունը, անբասիր կատարումը, հայրենի երկրի նկարագիրն արտահայտելու կարողությունը Եղիշե Թադեւոսյանին հնարավորություն են տվել ստեղծելու մոտ 500 հոյակապ՝ փոքր չափի էտյուդներ, որոնցից շատերը համարվում են հայկական կերպարվեստի, հատկապես բնանկարի մարգարիտներ:

## Առաջին անգամ Հայաստանում Լեւոն Թութունջյանի գեղանկարչությունը

Եվրոպական սյուրռեալիզմի նախահայրերից մեկի, ծագումով հայ, ֆրանսիացի գեղանկարիչ Լեւոն Թութունջյանի գլուխգործոցը Հայաստանում տեսնելու եզակի, առանց չափազանցության զարմանալի հնարավորությունը կոլեկցիոներ, արվեստը գնահատող Սարգիս Գրիգորյանի երկարատեւ ջանքերի շնորհիվ է: Լեւոն Թութունջյանին աշխարհը բարձր է գնահատում՝ նրան համարելով 1920-ականների տաշիզմի հիմնադիրներից մեկը: Նրա գեղանկարչությունը հիմնականում արտացոլում է Ցեղասպանության ողբերգության թեման, որի սարսափը նկարիչն ապրել է մանկության տարիներին: Նկարը, որը կներկայացվի www.hi-artonline.com նախագծով, ունի երկար տարիների հետաքրքրաշարժ պատմություն եւ հանդիսանում է Ցեղասպանության թեմայով Թութունջյանի առաջին աշխատանքը սյուրռեալիստական ինքնատիպության մեջ: Ստեղծվելով անցած դարի 30-ականներին՝ այն հանդիսանում է համաշխարհային սյուրռեալիզմի ամենաազդեցիկ աշխատանքներից մեկը: Թութունջյանի գլուխգործոցը աճուրդի է հանվել Ֆրանսիայում 1990 թվականին աշխարհի 50 ամենահայտնի նկարիչների՝ Դալիի, Պիկասոյի, Միրոյի, Շագալի, Ռոդենի, Ռենուարի, Մոնեի, Մանեի, Թյուրինգի, Դոնգենի, Լեկորբուզյեի եւ այլոց ստեղծագործությունների կողքին: Արվեստի մեծագույն՝ աշխարհի լավագույն թանգարաններին արժանացած գործերին հաղորդակցվելու հնարավորությունը կարելի է համարել մեր երկրում մշակութային կարեւորագույն իրադարձություններից մեկը: Լեւոն Թութունջյանի անվան հատուկ սրահում արվեստի կենտրոնը կներկայացնի Երվանդ Քոչարի, Մարտիրոս Սարյանի եւ այլ վարպետների եզակի գլուխգործոցները:

## Աբստրակտ արվեստ. Աշոտ, Գարիկ, Խաչատուր

Ժամանակակից նկարիչներ Աշոտ Հարությունյանը (քանդակագործ), Գարիկ Կարապետյանը եւ Խաչատուր Մարտիրոսյանն աբստրակտ ուղղության ամենահետաքրքրական ներկայացուցիչներն են: Բացի այդ, մինիմալիստի անկրկնելի ձեռագիր ունեցող այս եռյակի «տանդեմը» հետաքրքրական է նրանով, որ ընդունակ են ամենահամարձակ փորձարարությունների եւ որոնումների: Նոր նախագիծը, որը ներկայացնում են Աշոտը, Գարիկը եւ Խաչատուրը, ժամանակակից հայկական արվեստի «մեյնստրիմի» իսկական նմուշ է՝ ոչ տիպիկ, կարծրատիպեր կոտրող, դիտողի համար պատկերավորման ընդունված ձեւերի շրջանակից դուրս արվեստի տեսակը բացահայտող:

## Աճուրդ

Արվեստի ստեղծագործությունների կենդանի աճուրդը, որը կազմակերպվում է ԱԱ Աուկցիոնով, կկայանա 2014 թվականի մարտի սկզբին: Նկարները, քանդակները, հնաոճ իրերը, գրաֆիկական աշխատանքներն ու այլ լոտերը կներկայացվեն www.hi-artonline.com(aa.auction.am) արդեն հունվար ամսին, իսկ փետրվարի 14-ից աճուրդի հանված աշխատանքների բնօրինակները կցուցադրվեն «Ոսկե դար» պատկերասրահում:

Մասնակցության պայմաններին ծանոթանալու, այս կամ այն լոտը ձեռք բերելու ցանկությունը կարելի է արտահայտել ինտերնետային կայքի օգնությամբ կամ այցելելով արվեստի կենտրոն:

Ծրագրերը եւ ցուցահանդեսներն իրականացնում է «Աբրահամ եւ Աննա աուկցիոն» կենտրոնը:

# «Մարտիրոս Սարյան: Երկխոսություն հավերժի հետ» ցուցադրության բացումը Մատենադարանում

**Ցուցադրությունը ներկայացնում է Մարտիրոս Սարյանի տարբեր տարիների ստեղծագործությունների ընտրանին՝ դիմանկարներ, նատյուրմորտներ եւ բնանկարներ, ինչպես նաեւ ջրանկարներ եւ գրքերի նկարազարդումների նմուշներ:**

**Մ. Սարյան տուն-թանգարանի եւ Մաշտոցյան Մատենադարանի համագործակցության շրջանակներում բացված ցուցահանդեսում ընդգրկված են կտավներ՝ Մ. Սարյան տուն-թանգարանի, ինչպես նաեւ Սարյան ընտանիքի հավաքածուից: Ի դեպ, Մ. Սարյան տուն-թանգարանի ամբողջ հավաքածուն, թանգարանի շենքի հիմնարար վերանորոգման աշխատանքների հետ կապված, ի պահպանություն հանձնված է Մատենադարանին, որտեղ արդիական նոր սարքավորումներով օժտված պահոցներում հանգրվանել են նկարչի կտավները:**

**Այս ցուցադրությունն՝ անկասկած մեծ նվեր է ոչ միայն Մատենադարան այցելող հայ թե օտար զբոսաշրջիկների, այլեւ արվեստասեր լայն հասարակայնության համար:**

**Քաղաքակրթությունների հազարամյա խաչասերումների, մեծ մշակույթների դարավոր շփումների ու փոխհարստացման այն միջավայրում, որ ներկայացնում է Մատենադարանն իր նոր թանգարանային համալիրով ու ցուցադրություններով, Մարտիրոս Սարյանի կտավներն առավել կբացահայտվեն իրենց տարածական խորքով եւ վերժամանակյա խորհրդով՝ իբրեւ «Երկխոսություն հավերժի հետ»:**

ԱԶԳ **Մարզական**

# Արամ Հակոբյանը ստանձնեց առաջատարի դերը



Արաբական Միացյալ Էմիրություններում ընթացող շախմատի աշխարհի պատանեկան առաջնությունում հայ շախմատիստներից առայժմ բոլորից հաջող է հանդես գալիս Արամ Հակոբյանը: Նա 7 հնարավորից վաստակած 6,5 միավորով միանձնյա գլխավորում է մինչեւ 12 տարեկան տղաների մրցաշարի աղյուսակը: Արամը 7-րդ տուրում 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Սերգեյ Լոբանովի նկատմամբ: 3 շախմատիստներ 6-ական միավորով հետապնդում են Արամին: Տարիքային այս խմբում հանդես եկող Շանթ Սարգսյանն ունի 5 միավոր, Դավիթ Միրզոյանը՝ 4,5:

Հաջող է հանդես գալիս նաեւ մինչեւ 16 տարեկան աղջիկների մրցաշարի մասնակից Անի Հարությունյանը, որը 6 միավորով 3-րդ տեղում է: Անին ոչ-ոքի խաղաց Թիանլու Գուի հետ, որը 6,5 միավորով գլխավորում է աղյուսակը:

Մինչեւ 18 տարեկան տղաների մրցաշարում Հովհաննես Գաբուզյանը 5 միավորով 7-րդ տեղում է: Գաբուզյանը ոչ-ոքի խաղաց Քուենտին Լոյսեաուի հետ: Կարեն Գրիգորյանը 5-րդ անընդմեջ պարտիան ավարտեց ոչ-ոքի: Նրա մրցակիցը Լինուս Յոհանսոնն էր: Կարենն առայժմ անպարտելի է: Նա վաստակել է 4,5 միավոր: Առաջատարը 6 միավորով իրանցի Պոուա Իդանին է: Նրան կես միավոր են զիջում 5 շախմատիստներ:

Մինչեւ 16 տարեկան տղաների մրցաշարում Տիգրան Հարությունյանը 5,5 միավորով եզրափակում է լավագույն տասնյակը: Նա հաղթեց Սեթյակի Աջարիային: Տիգրանը եւս անպարտելի է: Մանուել Պետրոսյանը վաստակել է 5 միավոր: 6-ական միավորով առաջատարներն են ռուսաստանցի Կիրիլ Ալեքսեենկոն եւ լեհ Յան-Կրժիժտոֆ Դուդան:

Մինչեւ 14 տարեկան տղաների մրցաշարում Հայկ Մարտիրոսյանը 5 միավորով 15-րդ տեղում է: Նա հաղթեց Վիսվեշվարին: Առաջատարը 6,5 միավորով չինացի Դի Լին է:

Հաջող է հանդես գալիս նաեւ մինչեւ 8 տարեկանների մրցաշարի մասնակից Ռոբերտ Մուրադյանը, որը 5,5 միավորով 8-րդ տեղում է: Ռոբերտը հաշտություն կնքեց Կեւին Լովի հետ: Ամենակրտսեր տարիքային խմբում 100 տոկոսանոց արդյունք է ցույց տվել հնդիկ Պրագնանանդան:

Մինչեւ 10 տարեկանների մրցաշարում էլ 5,5 միավոր ունի Մամիկոն Ղարիբյանը, որը ոչ-ոքի խաղաց Լուկե Պուլֆերի հետ: 7 միավորով առաջատարը Ավոնդեր Լիանգն է:

# Գանացի ֆուտբոլիստները կփորձարկվեն «Շիրակում»


ՖՈՏՈԼՈՒՐ

Երկրի չեմպիոն Գյումրիի «Շիրակը» ձմռան նախապատրաստական շրջանում հավանաբար համալրվի գանացի ֆուտբոլիստներով: Վերջերս Գանա էր մեկնել ակումբի մարզական տնօրեն, «Շիրակի» նախկին ֆուտբոլիստ Արարատ Հարությունյանը, որը ներկա է գտնվել 8 երկրների մասնակցությամբ անցկացված մրցաշարին, ինչպես նաեւ դիտել է երկրի առաջնության հանդիպումները: Արարատ Հարությունյանը գանացի 6 ֆուտբոլիստի է ընտրել: Նրանք բոլորն էլ երիտասարդ ֆուտբոլիստներ են, մեկական հարձակվող ու պաշտպան, 4 կիսապաշտպան: Շուտով այդ ֆուտբոլիստները կժամանեն Գյումրի եւ փորձաշրջան կանցնեն «Շիրակի» կազմում:

Իսկ ահա «Շիրակի» ռմբարկու Սերժ Դեբլեն ամենայն հավանականությամբ կհեռանա թիմից: Նա մի շարք առաջարկներ ունի արտերկրից եւ արդեն հունվարին կարող է տեղափոխվել: Բորիս Կադիո Դիդիեն պետք է փորձաշրջան անցներ ղազախական «Կայսարում», սակայն վիզայի հետ կապված խնդիրներ ծագեցին ու նա մեկնեց հայրենիք: Եթե վիզայի հարցերը չկարգավորվեն, ապա Դիդիեն կմնա «Շիրակում»:

Նախապատրաստական շրջանում «Շիրակն» ուսումնամարզական հավաքներ կանցկացնի՝ ստուգելով ֆուտբոլիստների պատրաստվածության աստիճանը ստուգողական հանդիպումներում: Դրանցից մեկը նախատեսված է 2014-ի փետրվարի 8-ին Կալիֆոռնիա նահանգի Կարսոն քաղաքում, որտեղ «Շիրակն» ուժերը կչափի հանրահայտ «Լոս Անջելես Գելեքսիի» հետ:

# Ռոնալդուն մրցաշրջան-2013-ի լավագույն ռմբարկուն է

Մադրիդի «Ռեալի» եւ Պորտուգալիայի հավաքականի կիսապաշտպան Քրիստիանու Ռոնալդուն 2013-ի պաշտոնական մրցումների լավագույն ռմբարկուն է: Այս տարի նա 69 գոլի հեղինակ է դարձել: Այդ գոլերից 18-ը Ռոնալդուն խփել է Իսպանիայի ընթացիկ առաջնությունում, որտեղ ընդամենը մեկ գոլով է զիջում լավագույն ռմբարկու Դիեգո Կոստային:

2-րդ ցուցանիշն ունի ֆրանսիական ՊՍԺ-ի շվեդ հարձակվող Զլատան Իբրահիմովիչը, որի հաշվին 47 գոլ է գրանցված: Ամենաարդյունավետ ֆուտբոլիստների եռյակը եզրափակում է «Բարսելոնի» հարձակվող Լիոնել Մեսին՝ 45 գոլ: Նրա ցուցանիշն ավելի բարձր կլիներ, եթե վնասվածքի պատճառով մի շարք հանդիպումներ բաց չթողներ:

Լավագույն տասնյակում են նաեւ Լուիս Սուարեսը՝ 42 գոլ, Էդինսոն Կավանին՝ 41, Ռոբերտ Լեւանդովսկին՝ 39, Դիեգո Կոստան՝ 36, Ջեկսոն Մարտինեսը՝ 33, Ռոբին վան Պերսին՝ 31, Սերխիո Ագուերոն՝ 30: Ընդ որում Անգլիայի առաջնությունում հանդես եկող ֆուտբոլիստները դեռեւս հնարավորություն ունեն բարելավելու իրենց ցուցանիշները:

ՇԱԽՄԱՏ

# Անդրեասյանն ու Դանիելյանը հաշտություն կնքեցին

Գրոնինգենի շախմատի մրցաշարի 3-րդ տուրում Զավեն Անդրեասյանի եւ Էլինա Դանիելյանի մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի: Մեր շախմատիստները 2,5-ական միավորով հետապնդում են 3 անընդմեջ հաղթանակներ տոնած Էրվին Լ՚Ամիին, Վոյթեր Սպիլմանին, Պետեր Միխալիկին, Բենջամին Բոկին եւ Դավիթ Լոբժանիձեին:

Տիգրան Սիմոնյանը 2 միավորով 26-րդ տեղում է: Նա հաղթեց Յան Բալջեին:

# Հայերից լավագույնը Փաշիկյանի եւ Բաբուջյանի արդյունքն է

**Արաբական Միացյալ Էմիրություններում ընթացող շախմատի մրցաշարի 5-րդ տուրից հետո հայ շախմատիստներից լավագույն արդյունքն ունեն Արման Փաշիկյանն ու Լեւոն Բաբուջյանը, որոնք վաստակել են 3,5-ական միավոր: Արմանը հաղթեց Մամալ Անուրագին, Լեւոնը պարտության մատնեց Մերթ Էրդոգդուին:**

**Ռոբերտ Հովհաննիսյանը, Վահե Բաղդասարյանը, Տիգրան Ս. Պետրոսյանն ու Հովիկ Հայրապետյանը վաստակել են 3-ական միավոր: Հովհաննիսյանը պարտվեց Աստար Գոլիզադեհին: Հայրապետյանը զիջեց Ալոյզա Կվեյնիսին: Իսկ ահա Բաղդասարյանն ու Պետրոսյանը հաղթեցին համապատասխանաբար Բիակտի Կուլկարնիին եւ Վիկտոր Պլոտկինին: Մարկ Բասենցյանն ունի 1,5 միավոր: Նա պարտվեց Հուսեյն Նեզադին:**

**4,5-ական միավորով առաջատարներն են Բաադուր Ջոբավան եւ Միխայլո Օլեքսիենկոն:**

# Գեւորգ Ղազարյանը լավագույնների թվում է

**Sports.kz-ի տեղեկացմամբ, Կարագանդայի «Շախտյորում» հանդես եկող Գեւորգ Ղազարյանը ճանաչվել է երկրի առաջնության 2-րդ լավագույն ձախ կիսապաշտպան: Նա զիջել է Մարատ Խայրուլինին:**

**Ըստ խաղային օղակների լավագույններին որոշելու համար հարցում էր կազմակերպվել Ղազախստանի առաջնության մասնակից թիմերի գլխավոր մարզիչների շրջանում:**

**Ղազարյանը վարձավճարով էր հանդես գալիս «Շախտյորում»: Նա թիմի կազմում ավելի հաճախակի մասնակցել է Եվրոպայի լիգայի հանդիպումներին, քան առաջնության խաղերին՝ այդպես էլ չկարողանալով բացել գոլերի հաշիվը Ղազախստանում: Թիմի կազմում Ղազարյանը դարձել է Ղազախստանի գավաթակիր:**

**25-ամյա ֆուտբոլիստն այս տարվա նոյեմբերին պայմանագիր կնքեց «Շախտյորի» հետ: Մինչ այդ նրա տրանսֆերային իրավունքները պատկանում էին Դոնեցկի «Մետալուրգին»:**

# Մարկոսը «Քնած հսկաների» խորհրդանշական հավաքականում է



**Ռուսական Sportbox-ը կազմել է ՌԴ պրեմիեր լիգայում հանդես եկող հայտնի ֆուտբոլիստների խորհրդանշական հավաքականը, որոնք առաջնությունում չեն մասնակցել մեկ լրիվ հանդիպման: Այդ հավաքականի կազմում է նաեւ Մարկոս Պիզելին:**

**Ընթացիկ մրցաշրջանը շատ անհաջող դասավորվեց Մարկոսի համար: Նա ամռանը «Կուբանից» տեղափոխվեց «Կրասնոդար» այն հույսով, որ այդ թիմում ավելի հաճախակի խաղադաշտ դուրս կգա: Սակայն սպասելիքները չարդարացան: «Կրասնոդարում» Մարկոսը հայտնվեց պահեստայինների նստարանին: Նա թիմի կազմում առաջնությունում ընդամենը 6 ոչ լրիվ հանդիպում է անցկացրել՝ չխփելով ոչ մի գնդակ: Խոսակցություններ կան, թե Մարկոսը տեղափոխվելու է ղազախական «Ակտոբե», որի կազմում հանդես է գալիս Ռոբերտ Արզումանյանը:**

# Համահայկական ձմեռային խաղերը կանցկացվեն 4 մարզաձեւից

**2014-ի փետրվարի 24-ից մարտի 2-ը Հայաստանում առաջին անգամ կանցկացվեն Համահայկական ձմեռային խաղեր, որի ծրագրում ընդգրկված է 4 մարզաձեւ՝ դահուկային սպորտ, լեռնադահուկային սպորտ, սնոուբորդ եւ սափօղակով հոկեյ: Առաջին 3 մարզաձեւերից մրցումները կանցկացվեն Ծաղկաձորում, իսկ հոկեյի մասնակիցներին կհյուրընկալի Երեւանի մարզահամերգային համալիրը: Այս մասին նշվել է Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի խորհրդակցությունում, որը վարել է այդ կազմակերպության նախագահ Իշխան Զաքարյանը: Մասնակիցների թվում են եղել նաեւ Կիպրոսը ներկայացնող Հարություն Թամազյանը, խաղերի ռեժիսոր Ռուբեն Հովհաննիսյանը, նկարիչ-ձեւավորող Բագրատ Դիվանյանը, կոմիտեի գլխավոր քարտուղար Բագրատ Բուռնազյանը:**

**Խաղերի անցկացման կոմիտեն արդեն 14 երկրներից մասնակցության հայտեր է ստացել: Հայտերի ընդունման վերջնաժամկետը հունվարի 25-ն է: Մարզիկների գիշերավարձի եւ սննդի ծախսերը կհոգա կազմկոմիտեն:**

**Խորհրդակցության ընթացքում Ռուբեն Հովհաննիսյանը ներկայացրել է խաղերի բացման հանդիսավոր արարողության նախնական սցենարը: Քննարկվել է նաեւ խաղերի խորհրդանիշի հարցը:**

*էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

